ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"7" ապրիլի 2011թ № 62-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՏԵՂԻ ՍԵՐՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ կետի, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ, 67-68-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով, ի կատարումը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2000 թվականի դեկտեմբերի 21-ի <<Մարզային ենթակայության Կոռնիձորի, Խնձորեսկի և Տեղի սերմնաբուծական>> ՊՓԲԸ լուծարման մասին N93 որոշման և 2011 թվականի ապրիլի 4-ի Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գորիսի տարածքային հարկային տեսչության կողմից տրված N 462 տեղեկանքի որոշում եմ՝

1. Հաստատել <<Սյունիքի մարզային ենթակայության Տեղի սերմնաբուծական>> պետական փակ բաժնետիրական ընկերության լուծարման հաշվեկշիռը 07.04.2011թ. դրությամբ (կցվում է):
2. Լուծարային հանձնաժողովին՝ հաստատված լուծարման հաշվեկշիռը և օրենքով սահմանված մյուս փաստաթղթերը ներկայացնել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Գորիսի տարածքային բաժին ընկերության լուծարման պետական գրանցում կատարելու համար:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2011թ. ապրիլի 7
ք. Կապան